ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 9

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

15.03.2023 թ. ք. Իջևան

Առցանց կազմակերպած նիստին մասնակցում էին գիտական խորհրդի նախագահ Ա. Մարգարյանը, քարտուղար Ա. Ալեքսանյանը, Գ. Հովհաննիսյանը, Թ. Վարդանյանը, Ա. Պոտոսյանը, Գ. Ալեքսանյանը, Ա. Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը, Պ. Ասլիբեկյանը, Գ. Ավետիսյանը, Դ. Աֆյանը, ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահ Թ. Ջանվելյանը, Լ. Մնացականյանը: Նիստի օրակարգը ներկայացրեց Ա. Մարգարյանը:

Օրակարգ

1. 2022-2023 ուստարվա ավարտական կուրսերի ավարտական աշխատանքների նախապաշտպանության և պաշտպանության ժամանակացույցերի հաստատման մասին (զեկ. Ա. Մարգարյան):
2. 2022-2023 ուստարվա I կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփման մասին (զեկ. Ա. Մարգարյան):
3. Հաղորդում ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմի մասին (զեկ. Ա. Մարգարյան):

Բաց քվեարկությամբ 13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

Որոշում.- հաստատել նիստի օրակարգը:

1. Լսեցին.-2022-2023 ուստարվա ավարտական կուրսերի ավարտական աշխատանքների նախապաշտպանության և պաշտպանության ժամանակացույցերի հաստատման մասին (զեկ. Ա. Մարգարյան):

Ա. Մարգարյանը հաղորդեց, որ ուսանողի կողմից բակալավրի կրթական ծրագրի ելքային արդյունքներին համապատասխան մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի կատարումով և պաշտպանությամբ: Հաջողված ավարտական աշխատանքի կատարման և պաշտպանության իրականացման համար կարևոր է ավարտական աշխատանքների նախապաշտպանության կազմակերպումը, որը հնարավորություն է տալիս բացահայտելու և շտկելու առկա բացթողումները: Ելնելով վերոնշյալից՝ ներկայացվեց 2022-2023 ուստարվա ավարտական աշխատանքների պաշտպանության և նախապաշտպանության գրաֆիկները.

	Ֆինանսներ		Զբոսաշրջություն	
	առկա	Հեռակա	առկա	հեռակա
Ավարտական աշխատանքի պաշտպանություն	20.05.2022	17.06.2023	13.05.2023	17.06,2023
Ավարտական աշխատանքի նախապաշտպանություն	22.04.2023	02.06.2023	29.04.2023	27.05.2023
Ավարտական աշխատանքի հանձնում ամբիոն	մինչև 06.05.2023	մինչև 07.06.2023	մինչև 06.04.2023	մինչև 02.06.2023

Արտահայտվեցին.- Ա. Սարիբեկյանը, Գ. Հովհաննիսյանը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Հավանություն տալ 2021-2022 ուստարվա ավարտական կուրսերի ավարտական աշխատանքների նախապաշտպանության և պաշտպանության ժամանակացույցերին և ներկայացնել տնօրենի հաստատմանը:

2. ***Լսեցին.- 2022-2023 ուստարվա I կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփման մասին (զեկ. Ա. Մարգարյան):***

Դեկանի պաշտոնակարը հաղորդեց, որ Տնտեսագիտության ֆակուլտետում 2022-2023 ուստարվա առկա համակարգով առաջին կիսամյակի քննաշրջանին մասնակցել է 159 ուսանող: «Ֆինանսներ» կրթական ծրագրով 94 ուսանող, «Զբոսաշրջություն» կրթական ծրագրով 65 ուսանող: Քննաշրջանը հաղթահարել է 97 ուսանող, 10 ուսանող ստացել են գերազանց գնահատական («Ֆինանսներ» ԿԾ՝ 9, «Զբոսաշրջություն» ԿԾ՝ 1): Ֆակուլտետում բացարձակ առաջադիմությունը կազմել է 73, 84 % (Զբոսաշրջություն՝ 73,65 %, Ֆինանսներ՝ 74,04%):

Առաջին լուծարքից հետո առաջադիմությունը կազմել է 73%, իսկ երկրորդ լուծարքային շրջանից հետո ունենք հեռացման ենթակա մեկ ուսանող:

Առաջին կուրսի ուսանողների մեծամասնությունը ցածր միավորներ են արձանագրել Տնտեսագիտության տեսությունից, Մաթեմատիկական անալիզից և Տնտեսական մտքի պատմությունից:

Զբոսաշրջություն մասնագիտությամբ ուսանողների լուծարքները պայմանավորված են ուսանողների անտարբերությամբ և անուշադրությամբ, քանի որ բազմիցս իրենց ներկայացվել է գնահատման նոր համակարգը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմանդրամի ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.11 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- 2022-2023 ուստարվա I կիսամյակի լուծարքային շրջանի արդյունքների մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

3. ***Լսեցին.- Հաղորդում ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմի անդամների առաջադրման մասին (զեկ. Ա. Մարգարյան):***

Ա. Մարգարյանը հաղորդեց, որ ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգով» (**2017 թվականի նոյեմբերի 7-ի N 1282-Ն հրաման)**՝ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի հաստատմանն ենք ներկայացնում 2022-2023 ուստարվա «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» մասնագիտությունների ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմերը:

Դեկանի պաշտոնակատարը նշեց, որ ըստ վերոնշյալ կարգի՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվում են տվյալ ոլորտի գործատուներ և ակադեմիական հաստատությունների ներկայացուցիչներ, համապատասխան ֆակուլտետի դեկանը, ամբիոնի վարիչները, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստերն արձանագրում է քարտուղարը, ով տվյալ հաստատության աշխատակից է և հանձնաժողովի անդամ չէ: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմի առնվազն 50%-ը պետք է լինեն ոչ տվյալ հաստատության աշխատակիցներ:

«Ֆինանսներ»

1. Մնացականյան Հայկ Գերասիմի	- նախագահ, ՀՊՏՀ Ֆինանսական հաշվառման ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր,
2. Սիրոյան Գարիկ Աշոտի	- Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.,
3. Աֆյան Դիանա Գրիշայի	- Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ, տ.գ.թ.,
4. Սարիբեկյան Անուշ Աղաջանի	- Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ, «Ֆինանսներ (ըստ լորտի)» ԿԾՂ,
5. Շիրխանյան Ալեքսանդր Ալբերտի	- ՀՀ ԿԲ տնտեսական հետազոտությունների վարչության պետի ժ/պ, տ.գ.թ., ասիստենտ,
6. Մնացականյան Նինա Հովհաննեսի	- «Արդշինբանկ» ՓԲԸ Իջևանի մասնաճյուղի կառավարիչ,

«Զբոսաշրջություն»

1. Ոսկանյան Անահիտ Զարգանդի	- նախագահ, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի վարչության խորհրդական, տ.գ.թ., դոցենտ,
2. Հովհաննիսյան Գուրգեն Ժորժիկի	- Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, աշխ. գ. թ., պրոֆեսոր,
3. Պոտոսյան Ակսել Հարությունի	- Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի պրոֆեսոր, աշխ. գ. թ.,
4. Վարդանյան Թրահեղ Գերասիմի	- Տուրիզմի կառավարման և մշակութաբաության ամբիոնի

	պրոֆեսոր, աշխ. գ. դ., «Զբոսաշրջություն» ԿԾՂ,
5. Ղալթախչյան Նիկոլայ Ալբերտի	- «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ «Աղստև» մասնաճյուղի տնօրեն,
6. Դավթյան Անի Գագիկի	- «Լաստիվեր Ռեզորթ» հյուրանոցի փոխտնօրեն:

Արտահայտվեցին.- Ա. Սարիբեկյանը, Գ. Հովհաննիսյանը

*Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգով» /**2017 թվականի նոյեմբերի 7-ի N 1282-Ն հրաման**/՝ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.*

Որոշեցին.- Ի գիտություն ընդունել 2022-2023 ուստարվա Տնտեսագիտության ֆակուլտետի «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» կրթական ծրագրերի ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմերի մասին հաղորդումը և ներկայացնել տնօրենի հաստատմանը:

Գիտական խորհրդի նախագահ՝	*Ա. Մարգարյան*
Քարտուղար՝	*Ա. Ալեքսանյան*